ՍԵՊԱՁԵՎ ՆԱԽՇԸ ՍԵՎԱՆԻ ԱՎԱԶԱՆԻ ՈՒՇԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ԽԵՑԵՂԵՆՈՒՄ

ՄԵՐԻ ՔԵՇԻՇՅԱՆ

Հայաստանի հնավայրերից հայտնաբերված բրոնզի դարաշրջանի (մ. թ. ա. IV հազարամյակի կեսից – I հազարամյակ) խեցեգործական արվեստի նմուշներում կան բազմաթիվ և բազմատեսակ զարդաձևեր, որոնք առնչվում են նշված դարաշրջանի մարդու առասպելակրոնական պատկերացումներին, բնորոշում Հայաստանի հնաբնակի հոգևոր ընկալումների ձևերն ու աստիճանը:

Զարդարուն խեցեղենը, խոհանոցային կոպիտ, անզարդ խեցեղենի հետ, եղել է բրոնզի դարաշրջանի մարդու կենցաղի և պաշտամունքի հիմնական առարկաներից: Մարդն անկախ իր զարգացման աստիճանից ունեցել է գեղագիտական որոշակի ճաշակ, երբեմն՝ կատարյալին ձգտող: Հայտնաբերված պեղածոների մեջ (Լճաշեն, Այրիվան, Արթիկ, Լոռի-բերդ, Շենգավիթ և այլն) հանդիպում է հատուկ արարողակարգերի ժամանակ գործածված ծիսական խեցեղեն:

Բրոնզեդարյան՝ մասնավորապես խեցեղենի արվեստը հարուստ է տարատեսակ ձևերով և հնարանքներով: Մարդը, զարկ տալով իր երևակայությանը, ստեղծել է յուրատիպ նախշազարդումներով խեցեղեն, կարողացել է տարբեր նախշերի (երկրաչափական, բուսական և կենդանակերպ) համակցումով զարդերին տալ նոր երանգ, գունային նոր ձևեր և դրանց համակցումից ստեղծել կատարելության աստիճանի հասնող զարդաձևեր: Այս դեպքում նկատելի է, որ գունային ընտրությունը ևս զարդարման մի ձև է՝ կապված մարդու կյանքի, հավատալիքների ու հոգևոր պատկերացումների հետ:

Թեև Հայաստանի միջին բրոնզի դարաշրջանի (մ. թ. ա. XXVI–XV դդ.) խեցեղենի զարդարման արվեստի տարրերը բազմազան և տարատեսակ են, գունային ոճավորումներն ու լուծումները բրուտ-նկարչի կողմից տրված և ընտրված գեղարվեստական բարձր վարպետությամբ, այնուամենայնիվ ուշ բրոնզի դարի (մ. թ. ա. XV–XI դդ.) զարդաձևերից շատերն իրենց կատարողականությամբ և դասականությամբ չեն զիջում նախորդ դարաշրջանների զարդաձևերին, թեպետ դրանց մի մասը նոր երանգ ստանալով՝ դարձավ ավելի պարզ: Այդ հանգամանքը կապված էր մետաղի և փայտամշակության արհեստի զարգացման հետ: Նախշազարդումը ավելի շատ կատարվում էր բրոնզե, փայտե իրերի և պերճանքի առարկաների վրա, որոնք ավելի գործածական էին և կարևոր, քան խեցեղենը: Սակայն դրանով չի նսեմանում կավամանների դերը, որոնք սկսեցին օգտագործվել ավելի լայն բնագավառներում:

Սևանի ավազանի ուշբրոնզեդարյան մշակույթում, խեցեղենի սև փայլաներկով նախշազարդումը սկսում է կորցնել իր հղկվածությունն ու փայլը, արդյունքում գերակայություն են ստանում անփայլ կամ սև, խամրած, անզարդ խեցեղենը, չնայած որ շարունակվում էր պատրաստվել ծիսական խեցեղեն, ինչը, բնականաբար, սակավաթիվ էր:

Պատրաստող վարպետը, կավանոթի թրծումից հետո, սեղմման միջոցով ստեղծել է նախշ, որն արվել է ըստ համապատասխան գործիքի ձևի՝ ստանալով դրան բնորոշ զարդաձևեր (հաստ կամ բարակ գծեր, զանգվածային կենտ գծեր՝ իրար զուգահեռ կամ խաչվող): Սևանի ավազանի միջին բրոնզի դարաշրջանից ուշ բրոնզի դարի առաջին փուլի անցման խեցեղենի զարդարվեստում, առանձնահատուկ է եռագույն խեցեղենը (սև, կարմիր, սպիտակ երանգներով), որի մենաշնորհը հնագույն Հայաստանի զարդարվեստում պահպանել է Լճաշենը: Այն տիպաբանորեն առանձնանում և կատարյալ է դառնում նշված դարաշրջանի երկու փուլերի զարդարվեստի համար:

Ընդհանուր առմամբ, ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանին բնորոշ են փորագրման եղանակով արված ալիքաձև[1], ակոսագծաձև (լայն), բարակ փորագծերով, եղեներտերն զարդերը, եղնգազարդը կամ արնածաղկի սերմի նմանվող զարդաձևերը: Սևանի ավազանի հնագույն խեցեղեն արվեստի զարդարման հնագույն ձևերից մեկն էլ հարթակնիքների միջոցով՝ դրոշմման եղանակով արված նախշերն են, որոնք հանդես են գալիս շարքերով կամ խմբերով[2]:

Ուշ բրոնզի դարում (մ. թ. ա. XV–XI դդ.) Սևանի ավազանի խեցեղենի զարդարվեստում հանդիպող նախշման ձևերից առանձնանում է սեպանախշը կամ սեպաձև նախշը: Փաստենք, որ Հայաստանի ուշ բրոնզի դարի խեցեղենի զարդարվեստում սա այնքան էլ հաճախ հանդիպող ձևերից չէ: Ընդհանուր համեմատական անցկացնելով Հայաստանի տվյալ դարաշրջանի հնավայրերի նյութերի հետ՝ նկատելի է դառնում, որ դրանցից հայտնաբերվել են Սևանի ավազանում, Շիրակի դաշտում և ավելի սակավ՝ Լոռիում: Թերևս մենաշնորհային առավելությունը և դրա բազմազան ձևերի (տարբեր նախշերի հետ համադրումներով) պատրաստման կատարելությունը պատկանում է Շիրակին: Ակնհայտ է դառնում, որ առանձին տարածաշրջաններ կարծես մասնագիտացված են եղել որևէ զարդանախշի պատրաստման վարպետության մեջ, որոնք ավանդական են դարձել տվյալ տարածքի համար և միայն փորձի, փոխառնչությունների միջոցով ձեռք բերել տարածվածություն: Այս պարագայում՝ Սևանի ավազանում տարածված սեպանախշերի տեսակները, կարծես, ժամանակի ընթացքում դարձել են ավանդականորեն հարազատ և կիրառելի տվյալ հնավայրի զարդարվեստում:

---

[1] *Վ. Վ. Ա վ ե տ յ ա ն. Սևանի ավազանի մշակույթը մ. թ. ա. III–II հազարամյակներում, Երևան, 2003, էջ 174, աղ. LIV, նկ. 4, աղ. LV, նկ. 4, 6, էջ 175, աղ. LV, նկ. 2-3, 5, աղ. նկ. 7, աղ. LV, նկ. 2-3:*

[2] *Նույն տեղում, էջ 175:*

Սեպաձև նախշը Սևանի ավազանի ուշբրոնզեդարյան հզոր և ինքնատիպ մշակույթի սիրված, սակայն սակավ հանդիպող ձևերից է: Ինչպես յուրաքանչյուր զարդաձև, սեպաձև նախշը նույնպես ունեցել է զարգացման և կատարելագործման իր բնականոն ընթացքն ու աստիճանը: Ավանդական և ընդունված կիրառելի ձևերը ժամանակի ընթացքում դարձել են հոկելի ու մշակված: Նմանատիպ նախշի առկայություն ենք նկատում ավազանի միջինբրոնզեդարյան խեցեղենի զարդարվեստում: Այդ է փաստում Գեղարքունիքի մարզի Այրիվան (Ա-1) միջինբրոնզեդարյան կուրգանային տիպի դամբարանից ոչ հեռու, հողագործական աշխատանքների ժամանակ գտնված կավանոթը (նկ. 1):



Նկ. 1

Նշված խեցանոթի իրանագոտու և վզի հիմքի միջև ընկած դաշտում, հավասար հեռավորությամբ արված, փորագրագիծ երեք եռանկյունների մեջ հինգ շարքով արված են սեպաձև, սպիտակ լցոնով զարդեր: Դրանց թիվը եռանկյունների հիմքում 8-ն է, գագաթին՝ 3-ը: Իսկ եռանկյուններից յուրաքանչյուրի գագաթն առնված է փոքր շրջանակի մեջ[3]: Երեք եռանկյունների միջև եղած հեռավորությունը հավասարաչափ է՝ 14 սմ: Այսինքն՝ բրուտ-վարպետը, զարդարելուց առաջ կատարել է զարդի իրարից հավասարաչափ հեռավորությամբ լինելու և ճիշտ տեղաբաշխման չափում: Հավանաբար, զարդամոտիվի այս տեսակը խորհրդանշական որևէ իմաստ է արտահայտում, սակայն վերջնականորեն տալ դրա պատկերագրական լուծումը դժվար է: Միայն կարելի է ենթադրել, որ Սևանի ավազանի հնաբնակը, կարծես, զարդի միջոցով հաշվարկ է կատարել կամ պատկերել մի մտապատկերային երևույթ, որում ցայտունորեն, կարծես, ցանկացել է արտացոլել 3 թիվը: Սա հավաստում են 3 եռանկյունները, սրանց յուրաքանչյուրի վրա պատկերված 3 վերադիր շրջանազարդերը, գագաթին վերջացող կամ սահմանափակող 3 սեպանախշերը: Բացի այդ, դրվագող բրուտ-վարպետը ամբողջը կամ ընդհանուրը համադրելու, հավասար մասերի բաժանելու և վերլուծելու հմտություն է ունեցել:

Նկատենք միայն, որ Սևանի ավազանի միջին բրոնզի դարում սեպանախշի կիրառելիությունը այնքան էլ շատ չէ, որքան ուշ բրոնզի դարում:

Սեպաձև գեղագիտական նախշով խեցանոթի լավագույն օրինակ է հանդիպում Լճաշենի ուշբրոնզեդարյան խեցեղենի զարդարվեստում (նկ. 2): Նմանը,

---

[3] *Վ. Վ. Ա վ ե տ յ ա ն. Սևանի ավազանի մշակույթը..., էջ 102, Վ. Վ. Ա վ ե տ յ ա ն, Մ. Ս. Ք ե շ ի շ յ ա ն. Միջին բրոնզեդարյան նյութեր Այրիվանից.– Հայկական պետական մանկավարժական համալսարանի 52-րդ գիտաժողովի նյութերի ժողովածու, պրակ 1, Երևան, 2003, էջ 309, աղ. II, նկ. 5:*

սակայն, արդեն սեպագիր ձևով զարդարված և իմաստ արտահայտող, տարածված է Վանի թագավորության մշակույթում: 1974 թ. Վ. Ավետյանի կողմից Լճաշենի բրոնզեդարյան դամբարանադաշտի երկրորդ տեղամասի №7 դամբարանի պեղումներից գտնվել է բրուտագործական դրգի վրա պատրաստված, սև փայլաներկով մեծ կճուճ, որպիսին առաջին անգամ էր հայտնաբերվում Հայաստանի տարածքում[4]: Կճուճի բարձրությունն է 26 սմ, պարանոցի երկարությունը 7 սմ: Պարանոցի ներքնամասում ընդլայնակի իրար զուգահեռ անցնում են չորս ակոսագծեր: Իրանագոտու և վզի հիմքի ակոսագծերի միջև եզրահատվածը զարդարված է սեպաձև փոսիկների զարդախմբերով: Ըստ Վ. Ավետյանի՝ դրանք սեպագրեր չեն, բայց ունեն իմաստային նշանակություն և կարող են առանձին ուսումնասիրության նյութ լինել՝ նկատի ունենալով, որ բրգաձև դասավորված 6 խումբ սեպաձև զարդերից երեք խումբն ունի վերից վար շարված 13 նշան, չորրորդ խումբը՝ 14, հինգերորդը՝ 16, վեցերորդը՝ 19[5]: Մենք նկատել ենք, որ վեցերորդ խումբը բաղկացած է ոչ թե 19 սեպերից, այլ 21: Այս թիվը, կարծես, խորհրդանշում է գարնանային օրահավասարը՝ մարտի 21-ից հունիսի 22-ը՝ ամառային արևադարձը: Հետևապես, սեպանախշերի ընդհանուր թիվը կազմում է 90:



Նկ. 2

Սա, կարծես, պատահական թիվ չէ: Եթե ենթադրենք, որ պատրաստող վարպետը ցանկացել է ինչ-որ հաշվարկ անել, ապա 90 թիվը կազմում է մեկ տարեղանակի երեք ամիսների օրերի միջինը: Սա բազմապատկելով 4 թվին, որն ակոսագծերի թիվն է, ստացվում է 360, որն արեգակնային տարվա օրերի

[4] *Վ. Վ. Ա վ ե տ յ ա ն. Գործնական աշխատանքներ հնագիտությունից, Երևան, 1983, էջ 46-50, նկ. 4:*

[5] *Նույն տեղում, էջ 54:*

միջին թիվն է: 360-ը բաժանելով 12 ամիսների՝ այն է՝ չորս եղանակներին, կստանանք 30: Ստացվում է ամսվա միջին տևողության օրերի քանակը: Նկատենք, որ զարդարվեստի մեջ նախշը հենց այնպես չի կատարվել. այն ունի իր խորհուրդը, խորհրդանշանը և իմաստը: Թեկուզև հենց այստեղ վարպետը թվային հաշվարկ է կատարել նախշի տեսքով: Եթե Սևանի ավազանի հնաբնակը ունեցել է աստղագիտական գիտելիքներ, ճիշտ որոշել մոլորակների շարժը և հեռավորությունը, ինչի համար հարկավոր էին մաթեմատիկական գիտելիքներ, ուրեմն քարից զատ կավը նույնպես կարող էր որպես նյութ ծառայել՝ նման ձևով հաշվարկ կատարելու համար, ինչը, թերևս, կարելի է դասել ծիսական բնույթի խեցեղենի շարքին: Լճաշենի զարդարվեստային մշակույթին, կարծես, բնորոշ է թվային խորհրդաբանությունը, քանի որ նման բան նկատվում է նաև Լճաշենի № 9 դամբարանի սայլի վրա: Այստեղ զարդանախշը խորհրդաբանորեն արված է ի դեմս 12 և 24 թվերի:

Սեպաձև նախշերով խեցանոթներ հայտնաբերվել են Լոռու մարզի Շնող գյուղի Ղարաքոթուկ վայրում[6]: Սրա նախշը եղել է պարզ և մի շարքով գոտեպատել է անոթի պարանոցը[7]: Համանման նախշերով կավանոթներ են գտնվել Արթիկի բրոնզեդարյան հնավայրից[8], Աղավնաձորից[9], Էլառից[10], Եղեգնուտից (Ղամշկուտից)[11]:

Տ. Խաչատրյանն այն կարծիքն է հայտնել, որ սեպաձև նախշազարդն առաջացել է եռանկյունաձև զարդանախշի փոփոխությունից, ինչի հետ համաձայն չէ Վ. Ավետյանը: Ըստ Տ. Խաչատրյանի՝ զարդամոտիվի այս տեսակը գոյություն է ունեցել հնագույն ժամանակներից, և փոփոխվել է միայն կատարման եղանակը[12]: Վ. Ավետյանի ուսումնասիրմամբ, այդ սեպանախշերը ներկայացված են խմբերով և ունեն որոշակի իմաստ[13], ինչպես փորձեցինք վերևում ներկայացնել՝ կապված լճաշենյան սեպանախշ խեցանոթի պատկերագրության հետ:

Ընդհանրապես, հնագիտական և արվեստաբանական բնույթի գրականության մեջ նման զարդաձևն ընդունված է անվանել եռանկյունաձև կտրվածք կամ եռանկյունանախշ: Նմանատիպ զարդաձևը, սակայն, գագաթներով իրար նա-

---

[6] *Վ. Վ. Ա վ ե տ յ ա ն. Հին դամբարաններ Շնողի տարածքում.– ՀԽՍՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» (այսուհետև՝ ԼՀԳ), 1974, - 12, էջ 80-88:*

[7] *Վ. Վ. Ա վ ե տ յ ա ն. Գործնական աշխատանքներ հնագիտությունից, էջ 55:*

[8] Т. С. Х а ч а т р я н. Артикский некрополь. Ереван, 1979, с. 136, п-64, с. 321, п-474.

[9] *Լ. Բ ի յ ա գ ո վ. Աղավնաձորից և Զորաղբյուրից հայտնաբերված նորահայտ իրեր.– ԼՀԳ, 1985, № 4, էջ 71:*

[10] *Է. Վ. Խ ա ն զ ա դ յ ա ն. Էլառ-Դարանի, Երևան, 1979, էջ 159, աղ. XXIV, նկ. 131:*

[11] С. А. Е с а я н. Древняя культура племен северо-восточной Армении. Ереван, 1976, табл. 95.

[12] Т. С. Х а ч а т р я н. Древняя культура Ширака. Ереван, 1975, с. 220; *Վ. Վ. Ա վ ե տ յ ա ն. Սևանի ավազանի մշակույթը..., էջ 175:*

[13] *Վ. Վ. Ա վ ե տ յ ա ն. Սևանի ավազանի մշակույթը ..., էջ 175:*

յող վայրի կենդանու ատամնաշար հիշեցնող սեպանախշը կամ եռանկյունանախշը, Ե. Լալայանն անվանում է գայլատամ (գայլի ատամ)[14]:

Նմանատիպ սեպանախշեր հանդիպում են Արթիկում, որոնք նման են Ե. Լալայանի նկարագրածին[15]: Նկատենք մի հանգամանք. եթե Սևանի ավազանից գտնված խեցեղենի սեպանախշը ունի բրգաձև դասավորություն, ապա Արթիկում տարածված է հիմնականում «գայլատամի» նախշման ձևը:

Ձևաբանորեն սեպը՝ եռանկյուն է կամ եռանկյունաձև կտրվածք, փորվածք: Իր հերթին վերը նշված դրա իմաստաբանական նշանակությունը հավաստի է դառնում նրանով, որ եռանկյունը գաղափարանշան է՝ ի դեմս Գեղամա և Սյունյաց լեռների ժայռապատկերների: Սրանցում հանդիպող մեկ եռանկյունին արտահայտում է «լեռ» իմաստակիր գաղափարը, մի քանիսը՝ «լեռներ»[16]:

Նմանատիպ իմաստային բովանդակություն պարունակող եռանկյուն գաղափարանշան-զարդաձևեր հաճախ են հանդիպում Սևանի ավազանի միջինբրոնզեդարյան գունազարդ խեցեղենի պատկերագրությունում (Նոր Բայազետ, Լճաշեն):

Նկատենք, հորիզոնական դիրքով, գագաթներն իրար նայող՝ կրկնասակր կամ «թիթեռնիկ» կոչվող նախշը ևս տարածված էր ավազանի միջինբրոնզեդարյան մշակույթում: Այսինքն, եռանկյունանախշը ընդհանուր առմամբ եղել է ավազանի հնագույն կենցաղում և արվեստում սիրված, ավանդականորեն լայնորեն կիրառված զարդաձևերից մեկը: Դրա ձևաբանությունը պահելով, արվել և փնտրվել են նոր հնարանքներ՝ երբեմն փորձելով խեցեղենի վրա եռանկյունանախշը ստանալ նաև կետազարդերի միջոցով:

Նկատենք. պատմաբան Ա. Մովսիսյանը սակրանախշ է անվանում սեպաձև նախշը՝ ի դեմս կարմիրբերդյան հնագիտական նյութի[17], իսկ սեպանշանների ստեղծումը ենթադրաբար համարում ոչ թե միջագետքյան ազդեցության արդյունք, այլ դրանց տալիս է տեղական ծագում[18]: Սակայն նկատելի են տարբերիչ որոշ առանձնահատկություններ՝ եռանկյունանախշի և սեպաձև նախշի միջև: Այսպես. ուշբրոնզեդարյան սեպաձև եռանկյունի նախշը՝ ձևաբանորեն և տիպաբանորեն, տարբերվում է միջին բրոնզեդարյան գունազարդ խեցեղենի սակրանախշ կամ «թիթեռնիկ» կոչվող տեսակից: Այլ բան է, որ միջինից ուշ բրոնզի դար անցման շրջանում մտահղացվել է եռանկյունին օգտագործել այլ ձևով՝ մասնավորապես սեպանախշի: Փոխվել է կատարման ձևը և տեխնիկան, գունազարդման փոխարեն ընտրվել է փորագիր տարբերակը: Բայց այն, որ խեցե-

---

[14] *Ե. Լ ա լ ա յ ա ն. Դամբանների պեղումները Խորհրդային Հայաստանում, Երևան, 1931, էջ 155, նկ. 100:*

[15] Т. С. Х а ч а т р я н. Материальная культура древнего Артика. Ереван, 1963, с. 104, табл. 16, рис. 5.

[16] *Հ. Ա. Մ ա ր տ ի ր ո ս յ ա ն. Գիտությունն սկսվում է նախնադարում, Երևան, 1978, էջ 105, աղ. 19:*

[17] *Ա. Ե. Մ ո վ ս ի ս յ ա ն. Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, Երևան, 2003, էջ 207, նկ. 116, էջ 208, ծան. 8:*

[18] *Նույն տեղում, էջ 208:*

ղենի վրա սեպանախշը իմաստաբանական նշանակություն ունի և առայժմ ոչ լիովին պարզաբանված՝ փաստ է:

Նշենք եռանկյունանախշի և սեպանախշի միջև եղած տարբերակիչները.

1. սեպանշաններով հավաքված կամ կազմված բուրգը (նախշը) նման է եռանկյունու և կարող է արտահայտել տարբեր իմաստներ՝ նայած դասավորության, թվային կազմի, այլ նախշերի համադրման:

2. Սեպանշանները կարող են լինել աստղագիտական գաղափարաբանությամբ թվային միավորներ:

3. Եթե սեպանշաններով կազմված նախշը կարող է բաղկացած լինել 10-ից ավել սեպերից, և իր թվային դասավորությամբ տարբեր իմաստներ արտահայտել, ապա սակրանախշը՝ մեկից ոչ ավել:

4. Ի տարբերություն սեպանախշի՝ սակրանախշի ստացման ձևը ավելի հեշտ է և ունի կոնկրետ գաղափարաբանություն, իսկ սեպանշանների միջոցով հավաքվում է եռանկյուն-բուրգ:

Սեպաձև նախշը իր ռճական նորովի արտահայտությունն է գտել նաև մետաղի զարդարման արվեստում՝ ի դեմս Սևանի ավազանի հնագույն բրոնզեդարյան քանդակագործության, նաև զինագործության մեջ: Լճաշենյան ու բայազետյան ուշբրոնզեդարյան դաշույնների զարդարուն պատյանների սեպաձև կտրվածքները կամ նախշերն իրենց համադրությունն ու զարդարման կիրառությունն են գտել կենդանաքանդակների հետ:

Ուսումնասիրություններից պարզվում է, որ թեև Սևանի ավազանի բրոնզեդարյան զարդարվեստում սեպաձև նախշը սակավ է, սակայն հետագա ժամանակներում ձևափոխված տեսքով հաճախ է հանդիպում և առայժմ մենաշնորհը պատկանում է Շիրակի դաշտին:

Ընդհանուր եզրահանգմամբ, երևում է, որ սեպագրաձև նախշազարդի հիմքում ընկած է իմաստակիր եռանկյունին: Սևանի ավազանի վաղամարդը անընդհատ մշակել ու կատարելագործել է զարդանախշման իր դպրոցը, և կոնկրետ այս տեսակի խորհրդակիր զարդանախշի արտահայտման մեջ ներդրել ճաշակ ու զգացողություն:

КЛИНООБРАЗНЫЙ ОРНАМЕНТ НА КЕРАМИКЕ СЕВАНСКОГО БАССЕЙНА ЭПОХИ ПОЗДНЕЙ БРОНЗЫ

МЕРИ КЕШИШЯН

Р е з ю м е

Среди разнообразных орнаментов Севанского бассейна эпохи поздней бронзы (XV–XI вв. до н. э.) встречаются также клиновидные или клинообразные орнаменты, из которых типичным является орнамент сосуда Лчашенского погребения № 7. Эти орнаменты своеобразны по своей форме и назначению, а их культовое значение не вызывает сомнений. В основе орнамента – треугольник, имеющий определенный смысл: символику и даже элементы мблемы. В Лчашенской орнаментике цифровая символика очень типична, а в виде клинообразного орнамента может обозначать определенные космогонические представления. Такие идеографические знаки встречаются и на наскальных изображениях Гегамских и Сюникских гор. Клинообразные орнаменты встречаются также на ножнах кинжалов и керамических изделиях, найденных в Айриване, Лчашене и др. Данные орнаменты с наибольшей частотой

встречаются в раскопках на территории Ширакского плато. Несомненно, клинообразный орнамент развивался не только на основе длительного местного опыта, но в атмосфере контактов и взаимодействия с искусством жителей той же эпохи соседних территорий.

THE SEVAN BASIN WEDGE-SHAPED ORNAMENT IN THE LATE BRONZE AGE POTTERY

MARY KESHISHYAN

S u m m a r y

Among the various ornaments in the Sevan basin there are also wedge-shaped or cuneiform ornaments found in the tombs of Late Bronze age (the 15th-11th centuries B.C.). One of the significant examples is the earthenware crockery ornament discovered in tomb №7 in Lchashen. These ornaments are special for their forms and contents having also some cult meaning. The base of the ornament is a triangle which has some meaning, mystery and symbolic elements. The number mystic is widespread in Lchashen decorative art and wedge-shaped ornaments testify that there has been some notion about astronomy. Such ideological contents exist also in the rocky images of Geghama and Syunyats mountains. There are wedge-shaped ornaments on the Lchashen dagger scabbards and on the pottery discovered from Airivan. It is obvious that wedge-shaped ornament has developed not only by local experiment but also by the contact with neighbour regions' art.